ՀԷՍՍԷՆԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ARMENISCHER KULTURVEREIN IN HESSEN e.V.

Gegründet 1968
Gemeinnütziger Verein

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt

*Վարչութիւն/Der Vorstand*

Շրջաբերական թիվ 4 / Rundschreiben 4 / 2013

Ֆրանկֆուրտ/ Frankfurt, 10.09.2013

## Սիրելի Միութենականներ և Հայրենակիցներ,

Հէսսէնի Հայ Մշակութային Միության վարչությունը սիրով Ձեր ուշադրությանն է ներկայացնում միության հետագա ծրագրերը.

2013թ. սեպտեմբերի 21-ին, շաբաթ, ժամը՝ 17:30-ին



**ՀԱՆԴԻՊՈՒՄ «ԿԼՈՐ ՍԵՂԱՆ»-Ի ՇՈՒՐՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 22-ՐԴ ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ**

«Երևանը` որպես համահայության մայրաքաղաք»: Հեղինակ և վարող՝ **Գեորգի Ավետիսյան**, ճարտարա-պետության մագիստրատուրա: Հասցեն՝ Միության հանդիպման վայր՝ Hamburger Allee 52a, 60486 Frankfurt:

2013թ. սեպտեմբերի 28-ին, շաբաթ, ժամը՝ 17:30-ին



**ՀԱՅ ԿԻՆՈՅԻ ՕՐ**

Հայ կինոյի շարքից կցուցադրվի «Ճանապարհ դեպի կրկես», որը հայտնի դերասան, կրկեսի մեծ վարպետ Լեոնիդ Ենգիբարյանի մասին է: Ծրագրի հեղինակ և վարող՝ «Հայֆիլմ»-ի նախկին աշխատակից` **Ալեքսանդր Մելիք-Ստեփանյան**: Հասցեն՝ Միության հանդիպման վայր՝ Hamburger Allee 52a, 60486 Frankfurt:

2013թ. հոկտեմբերի 13-ին, կիրակի, ժամը՝ 12:00-ին






**ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ**

Այն կմատուցի Հոգեշնորհ Տ. Սերովբէ Վարդապետ Իսախանեանը՝ տալով օրվա պատգամը: Պատարագից հետո,

**ժամը 14:30**-ից, եկեղեցուն կից սրահում տեղի կունենա

**ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ**

Օրվա հյուրերն են. ավստրիացի հեղինակ Ռոբերտ Փրոսերը, որը կներկայացնի իր «Ոգիներ և Դաջվածքներ» վեպը և գերմանացի հեղինակ Գիզելա Ռամինգ-Նոյփոլդը, որը կներկայացնի իր «Հայաստան. Երկիր Արարատի լանջին» գիրքը: Հանդիպմանը ներկա կգտնվեն նաև Ֆրանկֆուրտի միջազգային գրատոնավաճառի մաս-նակից հայ հրատարակիչները:

Հասցեն՝ Gemeindesaaal, Alt-Hausen 3-5, Frankfurt-Hausen:

2013թ. հոկտեմբերի 25-ին, ուրբաթ.
**սկիզբը**՝ ժամը **19:30**-ին
մուտքը՝ ժամը 19:00-ին



## 45 ՏԱՐԻ ՀՀՄՄ

### ԴԱՍԱԿԱՆ ՀԱՄԵՐԳԻ ԵՐԵԿՈ

**նվիրված** Հեսսենի Հայ Մշակութային Միության 45 ամյակին: Համերգի ծրագրում կինչեն հայ և եվրոպացի կոմպոզիտորների ստեղծագործություններ: Ծրագրի մասին մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ հոկտեմբերի սկզբին մեր միության ինտերնետային կայքում՝ www.armenia.de:
Մուտքն անվճար է: Ցանկացողներին խնդրում ենք տեղերն ամրագրել մինչև հոկտեմբերի 15-ը հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ reservierung@armenier-frankfurt.de:

Հասցեն՝ Forumsaal der Frankfurter Sparkasse,
Neue Mainzer Straße 49, 60311 Frankfurt.

2013թ. նոյեմբերի 9-ին, շաբաթ
ժամը 17:30-ին



### ԲԱՑ ԴԱՍ

Երիտասարդական խումբը կներկայացնի արևմտահայ գրող Դանիել Վարուժանի կենսագրությունն ու ստեղծագործությունները: Ծրագրի հեղինակ և վարող՝ **Անահիտ Մուրադյան,** լեզվաբանության և գրականության մագիստրատուրա:
Հասցեն՝ Միության հանդիպման վայր՝ Hamburger Allee 52a, 60486 Frankfurt:

2013թ. նոյեմբերի 17-ին, կիրակի
ժամը 16:00-ին




## 45 ՏԱՐԻ ՀՀՄՄ

### ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ և ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈ

**նվիրված** Հեսսենի Հայ Մշակութային Միության 45 ամյակին: Միության շաբաթօրյա դպրոցի սաները, ինչպես նաև միության անդամները հանդես կգան իրենց պատրաստած տոնական ծրագրով՝ երգով, պարով ու ասմունքով: Նաև ելույթ կունենա միության նորաստեղծ երգչախումբը:
Հասցեն՝ Orangerie am Günthersburgpark,
Comeniusstraße 39, 60389 Frankfurt am Main:

ՀԷՍՍԷՆԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ARMENISCHER KULTURVEREIN IN HESSEN e.V.

Gegründet 1968
Gemeinnütziger Verein

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt

*Վարչութիւն/Der Vorstand*

2013թ. դեկտեմբերի 15-ին, կիրակի, ժամը՝ 16:00-ին



## ՀԱՅ ԴՊՐՈՑԻ ՏԱՐԵՄՈՒՏԻ ՀԱՆԴԵՍ

Տարեմուտի տոնական հանդեսով՝ երգով ու պարով, մեր դպրոցի սաները կդիմավորեն Ձմեռ-Պապիկին և Ձյունանուշին:
Մուտքն անվճար է: Հասցեն՝ Gemeindesaaal der Ev. Kirchengemeinde Hausen, Alt-Hausen 3-5, Frankfurt-Hausen:

2012թ. դեկտեմբերի 31-ին, երեքշաբթի, ժամը՝ 20:00-ին



## ՆՈՐ ՏԱՐՎԱ ՈՒՐԱԽ ԵՐԵԿՈ

Հայկական երգով ու պարով միասնաբար կդիմավորենք Նոր Տարին:
Մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ հաջորդ շրջաբերականից և մեր միության ինտերնետային կայքից:
Հասցեն՝ Saalbau Volkshaus Sossenheim, Siegener Straße 22, 65936 Frankfurt am Main

* (հնարավոր են ծրագրի փոփոխություններ, հետևեք մեր ինտերնետային կայքին՝ www.armenia.de)

Միության հայկական շաբաթօրյա դպրոցի **լեզվի** և **պարի** դասընթացները շարունակվում են միության հավաքատեղում, ամեն շաբաթ օր՝ ժամը 15:00-19:00: Լրացուցիչ առաջարկվում են նաև ամիսը երկու անգամ հայ **կերպարվեստի** և **շախմատի** դասընթացներ, ինչպես նաև **երգ-երաժշտության** դասընթացներ (ամիսը մեկ անգամ):
Ամեն շաբաթ ժամը 17:00-ին շարունակվում են նաև նորաստեղծ հայկական **երգչախմբի** պարապմունքները՝ Իրինա Հովհաննիսյանի ղեկավարությամբ:
Հասցեն՝ Hamburger Allee 52a, 60486 Frankfurt:

**Նոր առաջարկ հայկական շաբաթօրյա դպրոցի աշակերտների համար.**
Ամիսը երկու անգամ տեղի կունենան մաթեմատիկայի հայալեզու դասընթացներ Դր. Ռոբերտ Արտազյանի ղեկավարությանբ ժամը 14:00-16:00:
Հասցեն՝ Hamburger Allee 52a, 60486 Frankfurt:

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt *Վարչութիւն/Der Vorstand*

--------- **տեղեկություններ** --------- **տեղեկություններ** --------- **տեղեկություններ** ---------

**2013թ. սեպտեմբերի 13-ին**, **ուրբաթ, ժամը 20:00-ին**, տեղի կունենա երիտասարդ դաշնակահարուհի Լուսինե Խաչատրյանի մենահամերգը: Մանրամասն տեղեկություններ՝ www.armenia.de: Հասցեն՝ Internationales Theater Frankfurt, Hanauer Landstraße 7 (Zoo Passage), 60314 Frankfurt:

**2013թ. սեպտեմբերի 14-ին, շաբաթ,** Կարլսդորֆ-Նոյտհարդթում տեղի կունենա հայկական ֆուտբոլի մրցույթ: Մանրամասն տեղեկություններ՝ www.armenia.de:

**2013թ. սեպտեմբերի 14-ին, շաբաթ,** ճանապարհորդություն՝ «Գերմանիայում՝ հայկական հետքերով»: Հանդիպման վայրը՝ Վիզբադեն: Մանրամասն տեղեկություններ՝ www.armenia.de:

**2013թ. սեպտեմբերի 21-ին, շաբաթ, ժամը 17:00-ին**, Բադեն-Վյուրտեմբերգի հայկական համայնքները կազմակերպում են տոնական միջոցառում՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 22-րդ ամյակին: Մանրամասն տեղեկություններ՝ www.armenia.de:

**2013թ. հոկտեմբերի 9-ից մինչև 13-ը՝** Ֆրանկֆուրտի միջազգային գրատոնավաճառ: Հայկական տաղավարի հասցեն՝ (Halle 5.1, տաղավար՝ E144)

**2013թ. հոկտեմբերի 24-ից մինչև 27-ը՝** «Հայ Մշակութային Օրեր» Շտուտգարտում: Մանրամասն տեղեկություններ՝ www.armenia.de: